



Որքան ժամանակ որ յարուցեալ սուրբերն ու հրեշտակները ազատ կամք ունին, չենք կրնար նման քայլի մը կարելիութիւնը չեզոքացնել: Երբ Արուսեակը ինկաւ, մեծ թիով հրեշտակներ համոզեց, որպէսզի Աստուծոյ դէմ իր պայքարին միանան:

Սատանան խաբուեցաւ իր իսկ գեղեցկութիւնով եւ հպարտութեամբ: Իրեն միացած հրեշտակները մեծ սխալ մը ըրած էին: Աստուծոյ ըմբոստութիւնը պատճառ եղաւ որ կուրօրէն ուրիշի մը հետեւէին:

Մենք հաւանաբար պիտի չկրնանք ամբողջութեամբ այս հարցումին պատասխանել մինչեւ երկինք երթանք: Հիմա, ունինք Արուսեակի անկման օրինակը որպէսզի համոզենք եւ զգուշացնենք մարդոց որ այդ ճամբով չերթան:

«Ով ատուանց ծագող Արուսեակ, ի նչպէ՛ս երկինքէ ինկար ու մինչեւ գետին կործանեցար, դուն որ ազգերը նկուն կ'ընէիր: Դուն սրտիդ մէջ ըսած էիր Երկինք ելլեմ ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր բարձրացնեմ. եւ ժողովքի լեռը, հիւսիսի քովերը բնակիմ. Ամպերու բարձրութիւններուն վրայ ելլեմ, Բարձրելոյն նմանիմ: Բայց ահա դժոխքը կ'իջնես, գուբին խորունկ տեղերը.» (Եսայ. 14:12-15):

Հրեշտակները արու ե՞ն թէ էգ:

Հրեշտակները եբրայերէնի մէջ կը ներկայացուին *պէնէ էօօիմ*, այսինքն «Աստուծոյ որդիներ»: Աստուծոյ որդիներ կը կոչուէին փոխանակ մարդու որդիներու, որովհետեւ ստեղծուեցան ոչ թէ ծնան: Նման նկարագրութիւն մը միայն Ադամի կը յարմարի (Ղուկ. 3:38) եւ հրեշտակներու որոնց Աստուած ուղղակի ստեղծեց (Մաղմ. 148:2, 104:4, Կող. 1:16):

Ուր որ հրեշտակներ տեսանելիօրէն մարդոց երեւցան, մարդու մարմինով երեւցան (Օննդ. 18:8) կամ Սողոմի բնակիչներուն երեւցան կատարեալ մարդու կերպարանքով:

Ճիշտ է որ Յիսուս ըսաւ թէ յարութեան ատեն «ոչ կին կ'առնեն եւ ոչ երկան կը տրուին, հապա երկինքի մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս են» (Մատթ. 22:30): Այսուհանդերձ այս չի նշանակեր որ հրեշտակները «արու կամ էգ» չեն: Որովհետեւ յարութեան մէջ եղող մարդեր, «արու կամ էգ», իրենց անձնականութիւնը պիտի պահեն:

Հրեշտակները միշտ ալ նկարագրուած են որպէս «արու», եւ «ան» դերանունը միշտ ալ գործածուած է երբ իրենց կ'ակնարկուի: Կերպով մը Աստուած տուած է արնական ձեւ ու կերպարանք, թէեւ իրենց մարմինները չեն ենթարկուիր քաշողականութեան կամ ելեկտրամագնիսական ոյժերու: Այս երկու ոյժերը ներկայիս կը սահմանափակեն մեր մարմինները:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH


1800 Lake Street
Glendale, California 91201
USA

Phone: (818) 507-7400
AEBBCGlendale.org
Email: info@AEBBCGlendale.org

Revised 2022

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

- ☞ Հրեշտակները իրական են:
- ☞ Երբ երկինք երթանք, մենք հրեշտակներ կ'ըլլանք:
- ☞ Հրեշտակները մեղանչական բնութիւն ունին:
- ☞ Անցեալին հրեշտակները ինկան: Արդեօք ուրիշ ըմբոստութեան մը կարելիութիւն կա՞յ:



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

Ճանչնալ Յիսուս Քրիստոս եւ Ճանչցնել վե՛յն



Հրեշտակները իրական են:

Անկասկած, անոնք իրական են: Գաբրիել հրեշտակը Մարիամի պատգամ բերաւ որ զաւակ պիտի ունենայ (*Ղուկ. 1:26-39*): Միքայել հրեշտակը Սատանային անկումէն ի վեր Աստուծոյ համար կը պատերազմի: Յայտնութեան 12:7-ը կը տեղակայցնէ գալիք պատերազմի մը մասին, ուր սատանան պիտի պարտուի Միքայելէն եւ իր հրեշտակներէն ու երկինքէն վար պիտի ձգուի:

Խօսելով սատանային մասին. Ան հրեշտակներուն ամենէն զեղեցիկն էր ու կը կոչուէր Արուսեակ: Ան որոշեց որ Աստուծմէ լաւ է, ու իր դիրքէն վար ինկաւ եւ Աստուծոյ թշնամին եղաւ ու հետեւաբար սուրբերուն թշնամին (*Եսայ. 14-ը կարդա*):

Աստուծաշունչին մէջ կը գտնենք դէպքեր ուր մարդեր հրեշտակներու հետ գործ կ'ունենան: Հրեշտակները Աստուծոյ իրական ծառաներն են, բայց դուն չես հասկնար անոնց աշխատանքին տարողութիւնը մինչեւ երկինք չելլես: Ես կ'ուզեմ գիտնալ հրեշտակներուն կատարած գործերը իմ կեանքիս մէջ եւ անհամբեր եմ ամեն բան հասկնալու:

Աստուծաշունչի համարներ որոնք հրեշտակներուն հետ կապուած են:

1. Յայտնել, հռչակել—Ղուկ 1:26-38, 1:18-19
2. Պաշտպանել—Ղան. 6:22
3. Դատել — Մատթ. 13:41-42

Շատ բաժիններ կան Աստուծաշունչի մէջ որոնք հրեշտակներու մասին կը խօսին: Հետագայ տողերուն մէջ յաւելեալ համարներու ցանկ մը կայ. (Ելից 23:20, Մաղմ. 104:4, Մատթ. 4:11, Ղուկ. 16:22, Յովի. 1:51, Գործք. 5:19, Եբր. 13:2, Ա. Պետ. 1:12, Բ. Պետ. 2:11, Յայտ. 15:1, Յայտ. 17:7 եւ Յայտ. 22:8-9.):

Երբ երկինք երթանք մենք հրեշտակներ կ'ըլլանք:

Այս միտքը ընդհանրացած առասպել մըն է: Յաճախ նկարագրուած է որ երկրաւոր կեանքէն վերջ մարդեր թեւեր կ'ունենան ու կը թռչին, քնար կը նուագեն եւ ամպերուն վրայ կը հանգչին: Նման գաղափար մը տուող երգ մըն ալ ունինք «*Հրեշտակ Մը Ըլլալ Կ'ուզեմ Ես*»:

Աստուծաշունչը կը յայտնէ որ կերպով մը հրեշտակներու նման պիտի ըլլանք: Մեղանչած հրեշտակները մեղանչած մարդու նման օր մը Աստուծոյ կողմէ պիտի դատուին եւ հոն, յաւիտենականութեան մէջ ամուսնական յարաբերութիւններ չկան: Ոչ մէկ տեղ կը յիշատակուի թէ հրեշտակներ պիտի ըլլանք, թէեւ ամփոփ նկարագրութիւններ կան երկինքի մէջ թէ մեր եւ թէ հրեշտակներու վիճակին մասին: Աստուծաշունչը բնաւ չի յիշեր մարդոց եւ հրեշտակներու փոխանակութիւնը (այսինքն մարդուն հրեշտակ ըլլալու մասին):

«Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ Իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու, այն զօրութիւնով որ կարող է ամենը Իրեն տակ հնազանդեցնելու» (Փիլ. 3:21):

«Միրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիներ ենք, եւ տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք. բայց գիտենք որ երբ Անիկա յայտնուի, Անոր պէս պիտի ըլլանք. վասնզի Զանիկա պիտի տեսնենք, ինչպէս որ է» (Ա. Յովի. 3:2):

Հրեշտակները մեղանչական բնութիւն ունին:

Ոչ: Հրեշտակները, որոնք նման չեն մարմնով եւ արիւնով մարդուն, կը ճանչնան ամենակարող Աստուածը Իր ամբողջութեանը, այսինքն Իր զօրութիւնն ու փառքը: Անոնք կատարեալ ստեղծուեցան, կատարեալ գիտութեամբ: Անոնք ստեղծուեցան նաեւ ազատ կամքով եւ կրնան ընտրութիւն կատարել: Հրեշտակներու խումբէն մէկ երրորդը ընտրեց Արուսեակին հետեւիլ եւ Աստուծոյ դէմ ըմբոստացան:

Որովհետեւ կը ճանչնան Աստուծոյ—այսինքն կը ճանչնան որ Ան է միակ Աստուածը, հրեշտակներ չեն կրնար փրկուիլ մէջ մը որ իրենց վրայ Աստուծոյ իշխանութիւնը կը մերժեն: Անոնք արդէն կատարեալ գիտութիւնը ունին որ Ան ամեն բանի Ստեղծիչն է:

Մարդուն սկզբնական շրջանին բարիին ու չարին գիտութիւնը չտրուեցաւ: Ան ազատ կամքով ստեղծուած ըլլալով. ընտրեց սխալը հիմնուելով կերպով մը իր գիտութեան պակասին վրայ: Հետեւաբար մարդը Յիսուս Քրիստոսի թափած արիւնով, փրկուելու միջոցը ունի: Մարդ փրկութեան պէտք ունի որովհետեւ Աստուծոյ անհնազանդ ըլլալով կորսուեցաւ, ու Անոր հետ յարաբերութիւնը կորսնցուց, երբ մասնակից եղաւ մօտենալու եւ ուտելու արգիլուած ծառէն, բարին ու չարը գիտնալու ծառէն, եւ իր բնութիւնը մեղանչական եղաւ:

Անցեալին հրեշտակները ինկան: Արդեօք ուրիշ ըմբոստութեան մը կարելիութիւն կա յ:

Շատ մը Աստուծաշունչի դպրագետներ կ'ըսեն որ Արուսեակի գլխաւորութեամբ եղած ըմբոստութեան նմանը չի կրնար ըլլալ: Կ'ըսեն թէ Աստուած յաւիտենապէս պիտի արգիլէ նման բանի մը իրականանալը: Այս ուղղութեամբ, շատեր կը ձայնողին որեւէ հիմք ընծայելէ: